# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 27 - 28 (16422) ՇԱԲԱԹ, 9 ԱՊՐԻԼԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կառավարության աշխատակազմը, ապրիլի 6-ին կառավարության գրասենյակում տեղի է ունեցել Վրաստանի նախագահի եւ վարչապետի, օրենսդրական ու գործադիր մարմինների ներկայացուցիչների հանդիպումը: Հանդիպմանը քննարկվել են Վրաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններն ու տարածաշրջանային իրավիճակը:*



Հանդիպման մասնակիցներին նախագահը տեղեկատվություն է ներկայացրել ԱՄՆ կատարած այցի վերաբերյալ, քննարկվել է նաեւ երկրի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացը: Հանդիպմանը անդրադարձ է կատարվել նաեւ երկրում եւ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին:

Հանդիպմանը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց երկրում խորհրդարանական ընտրությունների անցկացման օրը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԵՐԿԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ՍՊԱՍՈՒՄ»

*Ապրիլի 4-19-ին Վրաստանում անցկացվում է ՆԱՏՕ-ի շաբաթ: Միջոցառման շրջանակներում, ապրիլի 4-ին Թբիլիսիում մեկնարկեց Վրաստան-ՆԱՏՕ ժողովրդական դիվանագիտության գագաթաժողովը:*



Գագաթաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Իր ելույթում, կառավարության ղեկավարը նշեց, որ Վրաստանը ալյանսի՝ Վարշավայի գագաթաժողովից սպասում է նշանակալից քաղաքական ու գործնական տեսանկյունից առաջընթաց: Նրա խոսքերով, Վրաստանը հնարավորինս անում է ինտեգրման գործընթացի դրական դինամիկայի պահպանման ու Վրաստանի եւ ալյանսի միջեւ առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՏՕ-Ի ՇՐՋԱՆԱԿՈՒՄ Է»

Վրաստանում, ՆԱՏՕ-ի շաբաթվա շրջանակներում անցկացվող գագաթաժողովում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր ելույթում անդրադարձավ գլոբալ կայունությանն ուղղված Վրաստանի գործադրած ջանքերին եւ ընդգծեց եվրոպական կուրսին երկրի հավատարմությունը: «Մենք հստակ հայտարարում ենք, որ Վրաստանում չկան հարցեր՝ կապված մեր ապագայի հետ, մենք երկրի մշակութային ու քաղաքական ապագան հստակորեն տեսնում ենք Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի շրջանակներում: Մենք միտված ենք միավորվել անվտանգության այդ հովանու ներքո, որը առավել կայունություն է հաղորդում ինչպես մեր տարածաշրջանին, այնպես էլ՝ գլոբալ առումով»,- հայտարարեց նախագահը:

ԱՊՐԻԼԻ 9-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է



*Վրաստանի համար ապրիլը առանձնակի ամիս է: 1989 թվականի ապրիլի 9-ին խորհրդային զորքերը Ռուսթավելու պողոտայում հեղեցին անկախության համար պայքարողների արյունը... Այդ օրը զոհվեց 21 հոգի, որոնցից 16-ը կանայք էին: Ողբերգությունից ուղիղ երկու տարի անց, 1991 թվականի ապրիլի 9-ին Վրաստանի Գերագույն խորհուրդը, հիմնվելով 1918 թվականի անկախության ակտի վրա, այդ օրը հռչակեց եւ վերականգնեց Վրաստանի անկախությունը:*

*Հիմա դժվար է ասել, թե ինչով էր պայմանավորված նման զուգադիպությունը, սակայն փաստ է, որ 27 եւ 25 տարվա վաղեմության այս երկու իրադարձություններն իրենց ուրույն տեղն են գրավել Վրաստանի նորագույն պատմության էջերում՝ մի կողմից ցավ ու կսկիծ, մյուս կողմից հպարտության եւ աներերության զգացում առաջացնելով:*

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՅԱՆ ԳՆՈՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՐԱԴԱԴԱՐ

*Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը եւ առավոտյան Ադրբեջանը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով ձեռնարկել էր լայնածավալ նախահարձակ գործողություններ, որոնց ընթացքում հրթիռահրետանային արկակոծման են ենթարկվել ոչ միայն հայկական զինուժի պաշտպանական դիրքերը, այլեւ խաղաղ բնակավայրերը: Ադրբեջանական զինուժի կողմից ապրիլի 2-ին Մարտունու ուղղությամբ ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետեւանքով սպանվել է 12-ամյա Վաղինակ Գրիգորյանը, երկու երեխա վիրավորվել է: Վիրավորվել են եւս չորս քաղաքացիական անձինք: Իսկ ապրիլի 3-ին հայտնի դարձավ, որ Թալիշում նախօրեին հակառակորդը գազանաբար գնդակահարել, խոշտանգել ու խեղել են երեք խաղաղ բնակիչների: Ըստ ապրիլի 7-ի տվյալների, հայկական կողմը 36 կորուստ ունի, 21 զինծառայող անհայտ կորած է, 122 մարդ՝ վիրավոր:*

*Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի ժամանակին եւ արհեստավարժ գործողությունների շնորհիվ, ապրիլի 1-5-ը տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը տվել է ավելի քան 300 կորուստ (որոշ աղբյուրներով՝ զոհերի ու վիրավորների թիվը նշվում է 2000), ոչնչացվել է 24 տանկ, 3 հետեւակի մարտական մեքենա, 1 ինժեներական տեխնիկա, 2 ուղղաթիռ, 8 անօդաչու սարք, 1ՄՄ 21 ռեակտիվ հրետանու մարտական մեքենա:*

*Ապրիլի 5-ին, ժամը 12:00-ին, շփման գծում դադարեցվել է կրակը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբների պետերի՝ Մոսկվայում ձեռք բերած պայմանավորվածության համաձայն:*

## ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆԸ

*Ապրիլի 1-ին ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում ռազմական գործողությունները լուրջ մտահոգություն են առաջացրել Վրաստանում: Տեղի ունեցածին անմիջապես արձագանքեցին Վրաստանի բարձրագույն ղեկավարները: Նրանք լուրջ անհանգստություն հայտնեցին այդ կապակցությամբ եւ կողմերին դիմակայության խաղաղ լուծման կոչ արեցին:*



Մասնավորապես, Վրաստանի նախագահ ***Գիորգի Մարգվելաշվիլին*** հորդորել է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին՝ «առավելագույն ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղում ստեղծված լարված իրադրության խաղաղ կարգավորման համար»:



«Մենք մեծապես հուսով ենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներն առավելագույն ջանքեր կգործադրեն, որպեսզի լիցքաթափեն լարված իրադրությունը եւ, խաղաղ, դիվանագիտական միջոցներով, միջազգային հանրակցության ակտիվ մասնակցությամբ, հասնեն հակամարտության խաղաղ լուծման»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Վրաստանի վարչապետ ***Գիորգի Կվիրիկաշվիլին***

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Լեռնային Ղարաբաղում դիմակայության սրման կապակցությամբ աշխատանքային հանդիպում ունեցավ երկրի արտաքին գործերի նախարարի, ուժային կառույցների ղեկավարների եւ խորհրդարանական կոմիտեների նախագահների հետ:*

Ուժային կառույցների ներկայացուցիչները վարչապետին տեղեկատվություն հաղորդեցին Լեռնային Ղարաբաղում զարգացող իրադարձությունների վերաբերյալ: Վարչապետը մտահոգություն հայտնեց իրավիճակի սրման եւ ռազմական գործողությունների վերսկսման կապակցությամբ, որոնք արդեն հանգեցրել են մարդկային զոհերի, այդ թվում՝ նաեւ խաղաղ բնակիչների շրջանում: Վարչապետը հույս հայտնեց, որ միջազգային հանրության ջանքերով հնարավոր կլինի իրավաճակը լիցքաթափել, ինչը նշանակալից է ողջ տարածաշրջանի խաղաղության եւ կայունության ապահովման համար:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԿՐԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՉԷՐ»



Գերմանական Deutche Welle լրատվականին տված հարցազրույցում Սերժ Սարգսյանը նշեց, որ հայկական կողմն արել է հնարավոր ամեն բան՝ կանխելու արյունահեղությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում:

«Մենք արել ենք հնարավոր ամեն բան: Մոտ երեք տարի առաջ Ադրբեջանը հրաժարվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջարկված երեք հիմնարար սկզբունքներից երկուսից եւ այժմ պնդում է, որ հակամարտությունը կարգավորվի բացառապես տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա: Բացի հակահայկական ելույթներից եւ Հայաստանի նկատմամբ

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

«Ցանկանում եմ հայտնել վրաց հասարակությանը, որ 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները նշանակված են հոկտեմբերի 8-ին»,- նշեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Աշխատանքային հանդիպմանը ներկա էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին, հետախուզության ծառայության ղեկավար Դավիթ Սուջաշվիլին, արտաքին կապերի խորհրդարանական կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին եւ Վրաստանի նախագահի վարչակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին:



Նշենք, որ Վրաստանում խորհրդարանական եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում Գերագույն խորհրդի ընտրությունների օրվա նշանակման մասին Վրաստանի նախագահի կարգադրությունը ներկայացվել են երկրի վարչապետի հաստատմանը: Վարչապետը 10-օրյա ժամանակահատվածում պետք է ստորագրի տվյալ որոշումը:

Գործող օրենսդրության համաձայն, ստորագրումից հետո, այն հրապարակվելու է «Օրենսդրական տեղեկատուում», իսկ ընտրությունների նշանակման իրավական ակտի հրապարակումից անմիջապես հետո սկսվում է ընտրական քարոզարշավը:

Վրաստանում նախորդ խորհրդարանական ընտրությունները կայացել են 2012 թվականին եւ հաղթանակ բերել «Վրացական երազանք» կառավարող կոալիցիային:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԵՐԿԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ՍՊԱՍՈՒՄ»

(Սկիզբը` 1-ին էջում)

վել բովանդակալից հարաբերությունների հաստատման համար: «Վրաստանն ունի առաջընթաց եւ նշանակալից արդյունքներ այդ ուղղությամբ: Վրաստանը` որպես ասպիրանտ երկիր, մեծ նշանակություն է տալիս Հյուսիսատլանտյան ալյանսի հետ կապերի ամրապնդմանը եւ կատարում ստանձնած պարտավորությունները: Հուսով ենք, որ Վարշավայի գագաթաժողովի շրջանակներում Վրաստանը կստանա հստակ ուղերձ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ Եվրամիության ու ՆԱՏՕ-ի ինտեգրման ուղղությամբ Վրաստանի միտումը ուղղված չէ որեւէ երկրի դեմ:

Վրաստանի վարչապետի համոզմամբ, Թբիլիսիում անցկացվող գագաթաժողովը հնարավորություն է ընձեռում քննարկելու բոլոր այն մարտահրավերները, որոնք ծառացած են երկրի առաջ եւ մշակել առաջիկա գործունեության ռազմավարությունը: «Նշանակալից է, որ Թբիլիսիում անցկացվող ժողովրդական դիվանագիտության գագաթաժողովը իր վրա է բեւեռել տարածաշրջանի բոլոր երկրների ուշադրությունը»,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին: Նա շնորհակալություն հայտնեց գագաթաժողովի կազմակերպիչներին` ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության տեղեկատվական կենտրոնին եվրոպական ու եվրատլանտյան տարածքին ինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարարի աշխատակազմին եւ Թբիլիսիում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակին:




ԽՈՐՀՐԴԱՐԱՆ




# ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

***Վրաստանի խորհրդարանական մեծամասնությունը նախաձեռնել է նոր օրինանախագիծ, որը նախատեսում է ընտրական օրենսգրքում փոփոխություն, ըստ որի, ընտրություններում քվեարկելու ցանկության դեպքում, վարչապետը ստիպված չի լինի պաշտոնաթող լինել:***

Օրինանախագծի հեղինակները պատգամավորներ Զվիադ Ձիձիգուրին, Գիա Վոլսկին եւ Վախթանգ Խմալաձեն են:

Հիշեցնենք, որ գործող օրենսդրությամբ, գործող վարչապետը` որպես խորհրդարանի պատգամավորի թեկնածու, գրանցվելու դիմումի ներկայացման արդեն հաջորդ օրը պարտավոր է պաշտոնաթող լինել:

Օրինանախագծի բացատրական թերթիկում նախաձեռնության հեղինակները նշում են, որ ընդհանրապես, ընտրություններում վարչապետի մասնակցությունն ընդունված պրակտիկա է: Միաժամանակ, վարչապետի` խորհրդարանական ընտրությունների մասնակցության արդյունքում պարտադիր հրաժարականը հանգեցնում է ողջ կառավարության հրաժարականին եւ նոր կառավարության ձեւավորմանը: Ընտրություններից մի քանի շաբաթ շուտ նոր կառավարության ձեւավորումը, որն արդեն երկու ամիս անց կարող է լրիվությամբ փոխվել, ոչ մի կերպ չի նպաստում սահմանադրական համակարգի կայունացմանը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎԱԿՈԽՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ



***Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող միգրացիայի ներքին գործերի եւ քաղաքացիության հարցերով եվրակոմիսար Դիմիտրիս Ավրամապուլոսի հետ:***

Հանդիպման ավարտից հետո անցկացված համատեղ ասուլիսում վարչապետը հույս է հայտնում, որ մոտ ամիսներին այցեգրային պայմանակարգի ազատականացման գործընթացը հաջողությամբ կավարտվի, եւ Վրաստանի քաղաքացիները կստանան կարճաժամկետ այցով Եվրամիության երկրներ ուղեւորվելու հնարավորություն: «Մենք առանձնակի երախտապարտ ենք եվրահանձնաժողովին Վրաստանում իրականացված բարեփոխումներին տրված բարձր գնահատականի համար եւ այն աջակցությանը, որը ցուցաբերվում է Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգի հաստատման օրենսդրական նախաձեռնությանը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ, Եվրամիության հետ այցեգրային երկխոսության շրջանակներում, Վրաստանն իրականացրել է մեծ ծավալի աշխատանք եւ կատարել օրենսդրական ու ինստիտուցիոնալ ծավալուն բարեփոխումներ: Վրաստանի կառավարության ղեկավարը երկրի քաղաքացիներին կրկին անգամ հիշեցրեց, որ այցեգրերի ազատականացումը վերաբերում է կարճաժամկետ այցերին եւ չի նախատեսում Եվրամիության երկրներում աշխատանքի տեղավորման հանգամանքը:

Իր հերթին, Դիմիտրիս Ավրամապուլոսը հայտարարեց, որ անայցեգրային պայմանակարգի հաստատման դեպքում, Վրաստան-Եվրամիություն հարաբերությունները թեւակոխում են որակական նոր փուլ: «Վրաստանը կատարել է այցեգրերի ազատականացման բոլոր անհրաժեշտ պայմանները, հիանալի օրինակ ծառայել տարածաշրջանի երկրներին եւ շարունակում է հաջողությամբ ընթանալ եվրոպական ինտեգրման ուղիով»,- հայտարարեց եվրակոմիսարը:



ՄԱԿ

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը ապրիլի 8-ին Ժնեւում կայացած խորհրդաժողովում ներկայացրեց ծայրահեղականության եւ ահաբեկչության կանխման «Գործողությունների պլանը»` նշելով աշխարհի գրեթե 1,8 միլիարդանոց բնակչության հետ իշխանությունների աշխատանքի անհրաժեշտությունը, որը ներկայացնում է երիտասարդությունը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նշեց, որ ներկայումս աշխարհում ծայրահեղականությունը տարածվում է, նպաստում ահաբեկչությանը, եւ պարզ է դարձել, որ այդ սպառնալիքների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է անհապաղ միջազգային համագործակցություն: «Գործողությունների պլանը ներկայացնում է հինգ պարզ եւ հավասարակշռված մոտեցումներ գլոբալ, տարածաշրջանային եւ ազգային մակարդակներով»,- նշել է գլխավոր քարտուղարը:*

ՍԻՐԻԱ

## ԿԻՐԱՌՎԵԼ Է ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔ

*Սիրիայի Հալեպ քաղաքի Շեյխ Մակսուդի շրջանի գնդակոծման ընթացքում օգտագործվել է քիմիական զենք: Դրա հետեւանքով, չորս մարդ թունավորման նշաններով տեղափոխվել է հիվանդանոց: Բժիշկները վկայում են, որ կիրառվել է քլոր:*

*Հալեպում քրդական աշխարհազորի հետ ընդհարումների ժամանակ արգելված զենքի կիրառման պատասխանատվությունն ստանձնել է «Ջեյշ ալ Իսլամ» խմբավորումը: Համապատասխան հրամանը տվել է բրիգադային պարագլուխներից մեկը:*

*Ապրիլի 6-ին հաղորդվել էր, որ Շեյխ Մակսուդ թաղամասում «Ջեբհաթ ան Նուսրա» ահաբեկչական խմբավորման զինյալները հարվածներ են հասցրել ինքնապաշտպանության քրդական ջոկատներին: Գնդակոծումների հետեւանքով զոհվել է 18 խաղաղ բնակիչ, որոնց թվում` երեխաներ, ինչպես նաեւ ինքնապաշտպանության քրդական ջոկատների 11 մարտիկ:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԽԶՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Եվրամիությանը մեղադրել է այն բանում, որ նա չի կատարում Անկարայի հետ միգրացիոն համաձայնագրի գծով իր խոստումները, եւ սպառնացել, որ Թուրքիան եւս չի կատարելու այն:*

*Հիշեցնենք, որ ԵՄ անդամ երկրների առաջնորդները եւ Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուն մարտի 18-ին համաձայնագիր են ստորագրել` պայմանավորվելով թուրքական քաղաքացիների համար առանց վիզայի ռեժիմի եւ ԵՄ-ից 3 մլրդ եվրո ստանալու դիմաց հետ վերադարձնել այն բոլոր սիրիացի անօրինական փախստականներին, որոնք Հունաստան են անցել Թուրքիայի տարածքով: «Մեր բյուջեի հաշվին գրեթե 3 մլն փախստական է պահվում: Իսկ Եվրոպայի կողմից խոստացվածից մինչ այժմ ոչինչ չկա»,- ասել է Էրդողանը:*

ՊԱՆԱՄԱ

## ՕՖՇՈՐԱՅԻՆ ՍԿԱՆԴԱԼ` ՀԵՌՈՒ ԳՆԱՑՈՂ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՎ

*Պանամայի Mossack Fonseca իրավաբանական ֆիրման, որի աշխատանքի մասին ապրիլի 3-ին տեղեկատվություն հրապարակեց Լրագրողական հետաքննությունների միջազգային կոնսորցիումը (ICIJ), որը գտնվում է Վաշինգտոնում, օգնել է ստեղծել 240 հազար ֆիկտիվ «մեկօրյա ընկերություններ», որոնք մի շարք դեպքերում սպասարկյալներին օգնել են «լվանալու» փողեր, խուսափելու պատժամիջոցներից եւ հարկերից:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ



***Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Հարավային Կովկասում Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Մերսի Թեմբոնի հետ:***

Հանդիպմանը կողմերը քննարկեցին 1,2 միլիարդանոց ծրագրի շրջանակներում գործընկերության եւ համագործակցության հարցերը: Նշվեց, որ Համաշխարհային բանկը դրական գնահատական է տալիս Վրաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման գործում:

«Մենք քննարկեցինք 2014-2017 թվականների ծրագրի կատարման ընթացքը, որը մոտենում է ավարտին: Մենք ողջունում ենք Վրաստանի կառավարության բարեփոխման չորս կետից բաղկացած ծրագիրը, որը ուղղված է կրթության ենթակառույցների եւ հանրային հատվածի արդյունավետության բարձրացմանը, եւ հուսով ենք, որ դա կլինի հերթական քայլը 2018-2020 թվականների նոր ծրագրի մշակման ուղղությամբ: Մենք գործում ենք Վրաստանի կառավարության եւ գործընկերների հետ, որպեսզի նախատեսված ծրագրերը կատարվեն»,- հանդիպման ավարտից հետո հայտարարեց Մերսի Թեմբոնը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀՈՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ



***Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին ապրիլի 6-ին խորհրդարանի կոմիտեների համատեղ նիստում ներկայացրեց հողատարածքների գրանցման գործընթացի մանրամասները:***

Նշենք, որ ներկայումս հողամասերի գրանցման օրինանախագիծը քննարկվում է խորհրդարանի կողմից: Ինչպես հայտարարեց Թեա Ծուլուկիանին, ինքը պատրաստվում է հանդիպումներ անցկացնել տարածաշրջաններում, որպեսզի տեղացիներին ներկայացնի իրականացվող բարեփոխումների մանրամասները:

Արդարադատության նախարարը խորհրդարանականներին կոչ արեց առավել պատասխանատվություն ցուցաբերել հողերի գրանցման օրինանախագծի քննարկմանը եւ դրա ընդունումը չձգձգել անհարկի պատրվակներով:

## ԿԴՅՈՒՐԱՑՎԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

***«Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության ղեկավար Գիա Վոլսկին խորհրդարանին ներկայացրել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը նրա պարզաբանմամբ, զգալիորեն կբարելավի ֆիզիկական անձանց կողմից բանկային պարտավորությունների չկատարման արդյունքում կորցրած անշարժ գույքի հետգնման ընթացակարգը:***

Ներկայացված նախաձեռնության համաձայն, ֆինանսական ինստիտուտը ազատվում է ԱԱՀ-ից (Արժեքի ավելացված հարկ), եթե ֆիզիկական անձի կողմից պարտավորությունների չկատարման արդյունքում ստացած բնակարանը կամ տունը հանձնում է նույն ֆիզիկական անձին՝ նախկին սեփականատիրոջը: Պարտապանը կարող է ետ գնել իր գույքը վավերացված պարտքի գումարի չափով:

Հիշեցնենք, որ, ներկայումս գործող օրենսդրության համաձայն, գույքի իրացման ժամանակ վարկատուն պարտավոր է բյուջեի օգտին փոխանցել անշարժ գույքի արժեքի 18 տոկոսի չափով ԱԱՀ:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ

***Մարտի 18-ին Վրաստանի խորհրդարանը պաշտպանեց հատուկ հանձնաժողովի ստեղծման առաջարկությունը, որը առաջիկա մեկ ամսվա ընթացքում զբաղվելու է «Վրացական երազանքի» կողմից մշակված սահմանադրական փոփոխությունների նախագծի հանրային քննարկման հարցով, փոփոխություններ, որոնք նախատեսում են ամուսնությունը որպես կնոջ եւ տղամարդու միություն հասկացողության հաստատմանը:***



Տասնիինգ անդամից կազմված հանձնաժողովի ստեղծման գաղափարը պաշտպանեց 81 պատգամավոր: Հանձնաժողովը գլխավորելու է «Վրացական երազանքից» պատգամավոր, փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են. «Վրացական երազանքից»՝ Գիա Վոլսկին, Էկա Բեսելիան, ազգային ֆորումից՝ Գուբազ Սանիկիձեն, պահպանողականներից՝ Գիգի Բուկիան, արդյունաբերողներից՝ Գոգի Թոփաձեն եւ Ջուրաբ Տղեմալաձեն, անկախ մեծամասնականներից՝ Գոչա Ենուքիձեն եւ Կախա Օքրիաշվիլին, ազատ ժողովրդավարներից՝ Գիա Ցագարեիշվիլին, անկախ պատգամավոր Գիա Գաչեչիլաձեն, ինչպես նաեւ կոմպոզիտոր Վաժա Ազարաշվիլին, դերասան՝ Մերաբ Թավաձեն եւ Թբիլիսիի պետական համալսարանի սահմանադրական իրավունքի պրոֆեսոր Նանա Չիգլաձեն:

Այդ կազմով հանձնաժողովը մեկ ամսվա ընթացքում հանրային քննարկման է ներկայացնելու փոփոխությունների նախագիծը, ըստ որի, Վրաստանի սահմանադրության 36-րդ հոդվածի առաջին կետը ձեւակերպվելու է հետեւյալ կերպ. «Ամուսնությունը, որը կնոջ եւ տղամարդու միջեւ կամավոր միություն է ընտանիքի ստեղծման նպատակով, հիմնվում է իրավական իրավահավասարության վրա»:

ՀՐԱՏԱՊ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը, 2015 թվականին Վրաստանում ամուսնությունների եւ ամուսնալուծությունների թվով առաջատարը Թբիլիսին է: Հաշվետու ժամանակամիջոցում մայրաքաղաքում գրանցվել են 8249 զույգերի ամուսնություն եւ 3601 զույգերի ամուսնալուծություն:***

Ընդհանուր առմամբ, Վրաստանի մասշտաբով, 2015 թվականին գրանցվել է 29157 զույգի ամուսնությունը, ինչը 7,5 տոկոսով զիջում է 2014 թվականի ցուցանիշը: Հաշվետու ժամանակամիջոցում ամուսնալուծվել է 9112 զույգ, ինչը 0,1 տոկոսով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Վիճակագրության ծառայության տվյալներով, ամուսնությունների եւ ամուսնալուծությունների նշանակալից թվեր են գրանցվել Իմերեթիի, Քվեմո Քարթլիի եւ Աջարիայի տարածաշրջաններում: Այդ առումով ցուցանիշները ցածր են Ռաճա-Լեչխումիի, Քվեմո Սվանեթիի տարածաշրջաններում, որտեղ գրանցվել են 232 զույգի ամուսնություն եւ 59 զույգի ամուսնալուծություն:

2015 թվականի տվյալների համաձայն, 3,1 տոկոսով ավելացել է այն զույգերի ամուսնալուծությունների թիվը, ովքեր միասին ապրել են 0-10 տարի: Ամուսնալուծությունների ամենամեծ բաժինն առնչվում է մինչեւ մեկ տարի ամուսնական կյանքով ապրած զույգերին՝ 10,2 տոկոս:



## «ԳԱԶՊՐՈՄԸ» ՀԱՄԱՁԱՅՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

*Ռուսական «Գազպրոմը» ստորագրեց վրացական կողմի ներկայացրած պայմանները պարունակող պայմանագիրը: Համապատասխան պայմանագիրը Վրաստանի էներգետիկայի նախարարությունն արդեն ստացել է: Ինչպես տեղեկացրին գերատեսչությունից, ուժի մեջ են բոլոր այն պայմանները, որոնք ներառված էին նախորդ պայմանագրի մեջ, որի համաձայն, Վրաստանը Հայաստան բնական գազի տարանցման դիմաց ստանում է երկրի տարածքով անցնող բնական գազի ծավալի 10 տոկոսը:*

*Միաժամանակ, նոր պայմանագրի կիրարկման համար անհրաժեշտ է անցնել ներքին մի շարք ընթացակարգեր: Մասնավորապես, համաձայնագիրը պետք է արժանանա արդարադատության նախարարության հավանությանը եւ հաստատվի կառավարության կողմից:*

*Հիշեցնենք, որ ռուսական կողմը պահանջում էր Վրաստանին պատկանելիք բնական գազի 10 տոկոսը փոխհատուցել փողով: Վրացական կողմը պաշտոնական Բաքվի հետ կարողացավ պայմանավորվել գազի մատակարարման ծավալի ավելացման հետ: Դրա արդյունքում, Ռուսաստանից լրացուցիչ ծավալների ստացման անհրաժեշտությունը վերացավ: Այդ պատճառով էլ վրացական կողմը հրաժարվեց Ռուսաստանի առաջադրած պայմանից եւ առաջարկեց պայմանագիրը ստորագրել նախկին պայմաններով:*

## ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ՝ ՏԱՍՆԱՄՅԱ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՄԲ

*Բնակչության համընդհանուր մարդահամարը այսուհետ եւս կանցկացվի տասնամյա պարբերականությամբ: Պարբերականությունը սահմանում է փոփոխությունը, որը նախատեսված է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում, որը կառավարությունն արդեն ներկայացրել է խորհրդարանին:*

*Ինչպես նշեցին օրինանախագծի հեղինակները, դա կնպաստի բնակչության համընդհանուր մարդահամարի կազմակերպմանն ու անցկացմանը, հասարակայնությանը տեղեկատվության ներկայացման օպերատիվությանը եւ բյուջետային միջոցների օպտիմալ օգտագործմանը:*

## ՀՐԴԵՀ՝ ԲԱԹՈՒՄԻԻ ԿԱՀՈՒՅՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ



*Ապրիլի 7-ի առավոտյան խոշոր հրդեհ է բռնկվել Բաթումիի կահույքի արտադրության եւ պահպանման ձեռնարկությունում: Այդ մասին հայտնել է Վրաստանի Հանրային հեռուստատեսությունը, որը սյուժե է ներկայացրել Բաթումիից: Հրդեհը մոլեգնում է ձեռնարկության 3-4 հազար քառակուսի մետր տարածքում:*

*Պատահարի վայրում աշխատում են 12 հրշեջ հաշվարկներ, որոնք բռնկման օջախների տեղափակման եւ մերձակա շենքեր կրակի տարածումը կանխելու աշխատանքներ են կատարում: Ինչպես նշվում է, շենքի մերձակայքում ներկերի պահեստ է գտնվում:*

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անհանգստություն է հայտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրադրության սրվելու կապակցությամբ եւ հույս հայտնել, որ միջազգային հանրակցության ջանքերով կհաջողվի թուլացնել լարվածությունը:

«Չեմ կարող անհանգստություն չհայտնել մեր հարեւան երկրներում իրադրության սրվելու կապակցությամբ: Ցանկանում ենք հուսալ, որ միջազգային հանրակցության ջանքերով հնարավոր կդառնա լարվածության թուլացումը, ինչը խաղաղության ու կայունության համար այնքան կարեւոր է մեր տարածաշրջանում եւ ոչ միայն»,- ասաց Վրաստանի վարչապետը:

Վրաստանը խաղաղություն է ցանկանում Կովկասում եւ պատրաստ է աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծմանը: Այդ մասին հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ ***Դավիթ Ուսուփաշվիլին:***



«Մենք անհանգստացած ենք այն բանից, որ զինված հակամարտություն է տեղի ունենում վրացիների բարեկամ երկու ժողովուրդների միջեւ: Մեր դիրքորոշումը եղել ու մնում է անսասան, մենք խաղաղություն ենք ցանկանում Կովկասում, մեր աշխարհում, մեր անմիջական հարեւանությամբ: Մենք ցանկանում ենք օժանդակել՝ ցանկացած հիմնախնդիր խաղաղ ճանապարհով լուծելուն: Ուստի, մենք ողջունում ենք միջազգային հանրակցության ակտիվությունն այդ գործընթացում»,- հայտարարել է Ուսուփաշվիլին խորհրդարանի բյուրոյի նիստում:

Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ ***Մանանա Կոբախիձեն*** շեշտեց, որ Հայաստանն ու Ադրբեջանը Վրաստանի համար շատ կարեւոր երկրներ են: «Նրանց միջեւ ցանկացած հակամարտություն մեզ համար անհանգստության լուրջ առիթ է»,- ասաց նա:



Ինչպես նշեց Վրաստանի խորհրդարանի եվրաինտեգրման կոմիտեի նախագահ ***Լեւան Բերձենիշվիլին*** Վրաստանի կառավարությանը առավելագույն զգուշություն է պահպանելու:



- Մենք շատ զգույշ պետք է լինենք: Վրաստանի բոլոր իշխանությունները, սկսած Զվիադ Գամսախուրդիայից, Շեւարդնաձեից եւ Սաակաշվիլուց ու ներկայիս իշխանությունը եւս, հստակ գիտակցում էին, որ այդ հարցում զգուշություն է պահանջվում, եւ մենք երբեք չենք սխալվել, չենք անցել որեւէ կողմի պաշտպանության, հարեւաններից ոչ մեկին չենք նեղացրել,- հայտարարեց Բերձենիշվիլին:

Արցախյան ու ադրբեջանական ուժերի շփման գծում իրավիճակի սրման կապակցությամբ, ապրիլի 3-ին Վրաստանի պաշտպանության նախարար ***Թինա Խիդաշելին*** հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ: Զրուցակիցները քննարկել են հակամարտության գոտում տեղի ունեցող իրադարձությունները: Երկուստեք կարեւորվել է խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունը:



Վրաստանի արտաքին գործերի նախարար ***Միխեիլ Ջանելիձեն*** Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրվելու կապակցությամբ չեղյալ է հայտարարել այցը Լեհաստան: Նա հեռախոսազրույց է ունեցել իր հայ գործընկեր Էդվարդ Նալբանդյանի հետ:



Իր հերթին, Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար ***Կախի Կալաձեն*** լրագրողներին հայտնել է, որ Թբիլիսին մտադիր է աջակցել լարվածության թուլացմանը: «Վրաստանը՝ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի հարեւան պետություն, առավելագույնս աջակցելու է իրադրության լիցքաթափման գործընթացին»,- նշեց նա:



Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորներ ***Ռուսլան Պողոսյանը եւ Ալի Մամեդովը*** Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձությունների կապակցությամբ տարածել են համատեղ հայտարարություն, որտեղ պատգամավորները «Վրացական երազանք» խմբակցության անունից իրենց մտահոգությունն են հայտնել տեղի ունեցածի առթիվ:



«Վրաստանի բնակչությանը եւ առանձնապես մեր հայ ու ադրբեջանցի համաքաղաքացիներին կոչ ենք անում պահպանել հանգստություն եւ խուսափել այնպիսի գործողություններից ու կոչերից, որոնք կարող են վնասել Վրաստանի տարածքում այդ երկու էթնիկ խմբերի բազմադարյա ավանդական խաղաղ գոյակցությանը: Վրաստանը միշտ աչքի է ընկել բազմամշակութային հարստությամբ ու բարիդրացիական հարաբերություններով, եւ Վրաստանի բոլոր քաղաքացիների պարտքն է նպաստել այդ ավանդույթի պահպանմանը»,- ասված է հայտարարության մեջ:

Վրաց փորձագետների կարծիքով, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի կարգավորումը քիչ հավանական է: Լեռնային Ղարաբաղում 1994 թվականին կնքված հրադադարի պայմանագրի պարբերական խախտումներ գրանցվել են նաեւ անցյալում, թեպետ ապրիլի 2-ի գիշերը տեղի ունեցածը ամենամասշտաբայինն է եւ առավել վտանգավորը: Այդ մասին հայտարարեց վրաց ռազմական փորձագետ, անկախ ռազմավերլուծական «Արսենալ» ամսագրի գլխավոր խմբագիր ***Իրակլի Ալադաշվիլին***:

- Իրավիճակը նախկինում այլ էր, դիմակայող երկու երկրների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ռազմավարական գործընկերները՝ Ռուսաստանն ու Թուրքիան, միմյանց հետ բարյացակամ հարաբերություններ ունեին, թեպետ անցյալ տարի Սիրիայում տեղի ունեցած միջադեպը բացասաբար անդրադարձավ Մոսկվայի եւ Անկարայի հարաբերությունների վրա:

Առաջներում, երբ Լեռնային Ղարաբաղում ընդհարումներ էին լինում, Մոսկվան ու Անկարան, օգտագործելով դիվանագիտական գաղտնի ուղիները, կարողանում էին մարել դիմակայությունը: Այսօր իրավիճակը շատ ավելի բարդ է, քանի որ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները ծայրաստիճան լարված են, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմը ձեռնտու չի Վրաստանին, սակայն, եթե դա տեղի ունենա, ապա Վրաստանն ակամա կներգրավվի դրա մեջ:



Երկու երկրների եւ նրանց ռազմավարական գործընկերների հաղորդակցության ամենակարճ ուղին անցնում է Վրաստանով: Եթե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները ծայրաստիճան սրվեն, ապա նրանց գործընկերները, բնականաբար, կփորձեն նրանց օգնել, եւ Վրաստանի կառավարությունը կհայտնվի այլընտրանքի առջեւ. եթե կողմերից մեկին տարանցման ուղի տրվի, ապա դա կարող է առաջ բերել երկրորդ կողմի դժգոհությունը»,- պարզաբանեց փորձագետը եւ հավելեց, որ ստեղծված իրավիճակում լավագույն ելքը հակամարտության խաղաղ կարգավորումն է:

ՏՐԱՆՍՊՈՐՏ



# ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ԿՀԵՏԱՁԳՎԻ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը

***Գազով աշխատող ավտոմեքենաների պարտադիր տեխստուգումը կհետաձգվի: Ինչպես նշեց Վրաստանի էկոնոմիկայի նախարարությանն առընթեր հավաստագրման կենտրոնի տնօրեն Պաատա Գոգոլաձեն, վերոնշյալ տեխստուգումը ծրագրված էր ներդնել 2016 թվականի ապրիլի 1-ից, սակայն, ամենայն հավանականությամբ, դրա կիրարկումը կհետաձգվի մինչեւ 2017 թականի հունվարի 1-ը:***

Հետաձգման պատճառներից մեկն այն է, որ մինչ օրս հայտնի չէ, թե որ ընկերությունն է իրականացնելու գազով աշխատող ավտոմեքենաների տեխնիկական ստուգումը:

«Շահագրգռված ընկերությունները հավաստագրման համար շատ ուշ դիմեցին էկոնոմիկայի նախարարությանը: Արդյունքում, դրանցից եւ ոչ մեկը չի հասցնի ստանալ թույլտվությունը եւ ապրիլին ձեռնամուխ լինի աշխատանքների կատարմանը: Այսօր արդեն ստացել ենք համապատասխան հայցերը եւ մոտ ժամանակներս կսկսենք քննարկումը: Հավաստագրված ընկերությունները գազով աշխատող ավտոմեքենաները կստուգեն Թբիլիսիում, Քութայիսիում եւ Բաթումիում: Դա կլինի այդ ծառայության ներդրման առաջին փուլը, իսկ մինչեւ տարվա վերջ հավաստագրեր կտրվեն եւս տասը ընկերությունների, որոնք ողջ երկրի մասշտաբով կապահովեն գազով աշխատող մեքենաների տեխստուգումը»,- հայտարարեց նա:

Պաատա Գոգոլաձեի խոսքերով, գազի համակարգերի տեխնիկական նորմերի խախտման համար պատժամիջոցներ ծրագրված չեն, սակայն 100 լարիի տուգանք կսահմանվի այն վարորդների համար, ովքեր կշարունակեն երթեւեկել չստուգված մեքենաներով:

Նշենք, որ ներկա դրությամբ, Վրաստանում գրանցված է գազով աշխատող մոտ 300 հազար ավտոմեքենա:

Գազով աշխատող ավտոմեքենաների պարտադիր տեխստուգման մասին որոշումն ընդունել է երկրի կառավարությունը: Ստուգման սխեման հետեւյալն է՝ ընկերությունը, որն ստանում է հավաստագիրը, ստեղծելու է հատուկ կենտրոններ, որտեղ անցկացվելու է մեքենաների ստուգումը: Մեքենայի սեփականատերը ստանում է հաշվետվություն այն մասին, թե որքանով է մեքենայում մոնտաժված գազի համակարգն անվտանգ, եւ որքանով է այն ճիշտ իրականացված: Անհրաժեշտության դեպքում, այդ փաստաթուղթը կարող է պահանջել պարեկային ոստիկանությունը, որին վերապահվում է տեխնիկական անվտանգության խախտման համար տուգանք սահմանելու իրավունքը:

Կառավարության որոշման համաձայն, գազի բալոնները ստուգվելու են տարբեր հաճախականությամբ՝ կախված որակից, տեխնոլոգիայից եւ այն նյութերից, ինչից դրանք պատրաստված են: Ածխաջրածնական պողպատից կամ չուգունապլաստիկայից պատրաստված բալոնները կստուգվեն երեք տարին մեկ անգամ, իսկ լեգիրացված պողպատե բալոնները՝ հինգ տարին մեկ անգամ: Այն դեպքում, եթե բալոնի պատրաստման նյութը հնարավոր չէ պարզել, ստուգումը կանցկացվի երեք տարին մեկ անգամ:

Պարտադիր կլինի նաեւ բալոնների միացման համակարգի ստուգումը, այն կիրականացվի երեք տարին մեկ անգամ: